



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2025 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 82-Լ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2026-2032 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հաշվեքննիչ պալատը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Հաստատել՝

1) Հաշվեքննիչ պալատի 2026-2032 թվականների ռազմավարական զարգացման ծրագիրը՝ համաձայն № 1 հավելվածի,


2) Հաշվեքննիչ պալատի 2026-2032 թվականների ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման միջոցառումների պլանը՝ համաձայն № 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

C:Sign

ԱՏՈՄ ԶԱՆԶՈՒՂԱԶՅԱՆ



ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ռազմավարական զարգացման ծրագիր 2026 – 2032

Մարդակենտրոնություն
Գերազանցություն
Համագործակցություն

◦ Հապավումների ցանկ

ԱԺ	Ազգային ժողով
ԲՀՄ	Բարձրագույն հաշվեքննիչ մարմին
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՊ	Հաշվեքննիչ պալատ
ԿՀԳ	ԱՄՆ կառավարության հաշվետվողականության գրասենյակ
ԵՄ	Եվրոպական միություն
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսային ծրագիր
ՄՌՏՀ	Մարդկային ռեսուրսների տեղեկատվական համակարգ
ՇԱԱԳ	Շվեդիայի Ազգային աուդիտի գրասենյակ
ՎՊ	Վերահսկիչ պալատ
INTOSAI	Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպություն
IFPP	INTOSAI-ի մասնագիտական հայտարարությունների շրջանակ
OECD/SՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
SIGMA/ՍԻԳՄԱ	Աջակցություն պետական կառավարման և ղեկավարման բարեփոխումներին
USAID/ԱՄՆ ՄԶԳ	Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն

I. Ներածություն

Հաշվեքննիչ պալատը (այսուհետ՝ Պալատ) Հայաստանի Հանրապետությունում արտաքին պետական հաշվեքննության ոլորտում քաղաքականությունը մշակող, հաստատող և իրականացնող անկախ պետական մարմինն է:

Հաշվեքննությունների շրջանակում Պալատը գնահատում է հանրային միջոցների կառավարման օրինականության (ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների իրականացմամբ) և արդյունավետության (կատարողականի հաշվեքննությունների իրականացմամբ) սկզբունքների պահպանված լինելը:

Իր գործունեության ընթացքում Պալատը ղեկավարվում է թափանցիկության ու հաշվետվողականության արժեքներով հանրությանը, Ազգային ժողով և Կառավարություն է ներկայացնում հաշվետվություններ հանրային սեփականության, ներառյալ ֆինանսների կառավարման արդյունավետության և օրինականության վերաբերյալ:

2024 թվականի մայիսին Ազգային ժողովի կողմից ընդունված «Հաշվեքննիչ պալատի մասին» նոր խմբագրությամբ օրենքով արտաքին պետական հաշվեքննության գործառույթի կարգավորումները համապատասխանեցին INTOSAI միջազգային ստանդարտներին և չափանիշներին, որով կայուն հիմքեր դրվեց հետագա ինստիտուցիոնալ զարգացման համար:

Նոր օրենքով զգալիորեն լավարկվել են Պալատի գործունեությանն առնչվող հիմնական ուղղությունների իրավական կարգավորումները:

Հաշվեքննիչ պալատի մանդատը դարձել է առավել համապարփակ: Հաշվեքննության շրջանակն այժմ ներառում է հանրային շահին վերաբերող՝ գործնականում բոլոր գործընթացները, ներառյալ նաև ընդերքօգտագործումը, հանրային սեփականության կոնցեսիոն ու հավատարմագրային կառավարումը, Կենտրոնական բանկի վարչական ծախսերը և կապիտալ ներդրումները, ինչպես նաև պետական աջակցության եղանակներով տնտեսավարումը:

Ապահովվել է ՀՊ մարդկային կապիտալի կառավարման գործառույթի գործառնական անկախությունը, ինչպես նաև հստակեցվել են հաշվեքննողների որակավորման պահանջները և վարձատրության չափանիշները:

Պետական մարմիններում առկա՝ հաշվեքննության համար անհրաժեշտ տեղեկատվությունը հասանելի է Հաշվեքննիչ պալատի համար:

Հաշվեքննիչ պալատի կառավարման մոդելը վերանայվել է՝ համապատասխանեցվելով միջազգային ճանաչում ունեցող կորպորատիվ կառավարման ժամանակակից ստանդարտներին՝ ապահովելով հակակշիռների և զսպումների արդյունավետ մեխանիզմներ:

Պալատի 2026-2032 թվականների գործունեությունն ուղղվելու է իր աշխատանքների որակի բարձրացմանը և դրա նպաստումը հանրային կառավարումը բարելավելու գործին առավելագույնի հասցնելուն՝ ի շահ քաղաքացիների: Այդ նպատակով նախատեսվում է՝

- բարձրացնել մասնագիտական կարողությունները,
- կիրառել թվային գործիքներ հաշվեքննության գործընթացում,

- ներդնել որակի կառավարման համակարգ և մոնիթորինգի մեխանիզմ,
- ընդլայնել Պալատի հանրային ընկալումը:

Սույն ռազմավարությունը մշակվել է՝ հաշվի առնելով Պալատի 2024-2025 թվականների Ռազմավարական զարգացման ծրագրի արդյունքները, միջնաժամկետ հաշվեքննության առաջնահերթությունները և ներքին գնահատումների արդյունքները:

2024-2025 թվականների Ռազմավարական զարգացման ծրագիրը մշակվել է ՏՀԶԿ-ի (OECD) ՍԻԳՄԱ (SIGMA) ծրագրի աջակցությամբ, որի իրականացման գործում ստացվել է մասնագիտական աջակցություն ԱՄՆ Կառավարության հաշվետվողականության գրասենյակի (GAO), Շվեդիայի ազգային աուդիտի գրասենյակի (SNAO) և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNDP) կողմից:

II. Առաքելություն, տեսլական, արժեքներ և սկզբունքներ

Առաքելություն Հաշվեքննությունների միջոցով նպաստել հանրային կառավարման բարելավմանը:

Տեսլական Լինել օրինակելի և վստահելի բարձրագույն հաշվեքննիչ մարմին:

Արժեքներ

Մարդակենտրոնություն. գործունեության կենտրոնում գտնվում է ՀՀ քաղաքացիների շահը:

Գերազանցություն. իրականացվում է բարձր որակի հաշվեքննություններ, որոնք հիմնավոր են և ազդեցիկ:

Համագործակցություն. ինչպես Պալատի ներսում, այնպես էլ գործընկեր ԲՀՄ-ների, միջազգային կազմակերպությունների և տարածաշրջանային ցանցերի հետ կառուցողական և ակտիվ համագործակցությունը անփոխարինելի է՝ հաշվեքննության որակը, ինստիտուցիոնալ կարողությունները և ազդեցությունը ուժեղացնելու համար:

Սկզբունքներ

Անկախություն. Պալատն անկախ է իր գործունեության պլանավորման և իրականացման գործում:

Օրինականություն. Պալատը գործում է ՀՀ Սահմանադրության և օրենսդրության շրջանակում և ապահովում է ՀՀ միջազգային պայմանագրերով Պալատի համար սահմանված պարտավորությունների կատարումը:

Թափանցիկություն և հաշվետվողականություն. Պալատի գործունեությունը թափանցիկ է և պահպանվում է լիարժեք հաշվետվողականություն:

Ազնվություն. Պալատն իր գործունեությունն իրականացնում է այնպես, որպեսզի պահպանի վստահությունը և հարգանքը իր գործունեության նկատմամբ՝ ձգտելով մնալ որպես օրինակելի պետական կառույց:

Մասնագիտական բարձր մակարդակ. Պալատը մշտապես պահպանում է բարձր մասնագիտական չափանիշները և գործում է անբասիր՝ գիտելիքների, նորարարությունների և փորձի փոխանակման միջոցով:

Գաղտնիություն. Պալատը պահպանում է հաշվեքննության ընթացքում ձեռք բերված տեղեկատվության գաղտնիությունը:

III. Հաշվեքննության ռազմավարական առաջնահերթություններ

Հաշվեքննության միջնաժամկետ առաջնահերթ ոլորտների սահմանումը նպատակ ունի արդյունավետորեն նպաստել մարդկանց կյանքի որակի բարձրացմանը: Միջնաժամկետ առաջնահերթությունների առկայությունը հնարավորություն է ընձեռում հանրային կառավարումը բարելավելուն նպաստելու ճանապարհին մշտապես ձգտել Հաշվեքննիչ պալատի ռեսուրսների դիմաց առավելագույն արժեք ստեղծելուն:

Հաշվեքննության առաջնահերթությունների հիմքում ընկած են հանրային կառավարման համար սահմանված գերակայությունները, որոնք բխում են օրենսդրությունից, կայուն զարգացման նպատակներից (SDG), Կառավարության ծրագրերից և ոլորտային՝ հայեցակարգային ու ռազմավարական քաղաքականությունների փաստաթղթերից:

Հաշվեքննիչ պալատը սահմանել է հաշվեքննության յոթ հիմնական առաջնահերթություններ, որոնց իրագործմամբ հնարավոր կլինի նպաստել՝ արդիական պետական ինստիտուտների միջոցով մարդու պահանջմունքներն առաջանցիկ հասցեագրող հանրային կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Հաշվեքննության յուրաքանչյուր առաջնահերթության շրջանակներում ներկայացվում են հաշվեքննության նախատեսվող ուղղությունները, որոնք բխում են օրենսդրությունից և համահունչ են Կառավարության ծրագրով, ՄԺԾԾ-ով և ոլորտային ռազմավարական փաստաթղթերով արձանագրված հիմնախնդիրների ու հանրային քաղաքականության առաջնահերթությունների շրջանակին:

Այս առաջնահերթ ոլորտները համարժեք կարևորություն ունեն, յուրաքանչյուրը վերաբերում է հանրային բարօրության և զարգացման կարևոր ասպեկտներին:

1. Մարդուն մարչելի, հասանելի, որակյալ և դիմակայուն առողջապահություն

2. Մարդուն մարչելի և որակյալ ցկյանս կրթություն

3. Մարդուն շրջապատող մաքուր և անվտանգ միջավայր

4. Մարդուն մարչելի և արդյունավետ արդարադատություն

5. Արդահանմանը միտված, գիտահեն և մրցակցային տնտեսության զարգացում

6. Պետական ֆինանսների և սեփականության կառավարման ինստիտուտների զարգացում

7. Ներդաշնակ զարգացող համայնքներ

IV. Կարողությունների ռազմավարական զարգացման առաջնահերթություններ

Պալատի արդյունավետ և օգտավետ կառուցվածքը, միջազգայնորեն ընդունված սկզբունքների, ստանդարտների և մեթոդաբանության հիման վրա իրականացվող հաշվեքննությունները, բավարար թվով մասնագիտական անձնակազմը, ինչպես նաև հաշվեքննության արդյունքների պարզ և թափանցիկ հաղորդակցությունը, անփոխարինելի պայմաններ են՝ այնպիսի հաշվեքննության արդյունքների հասնելու համար, որոնք անմիջական ազդեցություն ունեն քաղաքացիների կարիքների վրա:

Հաշվեքննիչ պալատի 2026-2032 թվականների ռազմավարական զարգացման առաջնահերթությունները կենտրոնացած են ՀՊ օրենքով սահմանված ժամանակակից կառավարման մոդելին ՀՊ կառուցվածքի համապատասխանեցման, հաշվեքննության արդյունքների որակի բարձրացման, ՀՊ մարդկային կապիտալի զարգացման, հաղորդակցության և ռազմավարական գործընկերությունների ամրապնդման վրա:

Պալատի առանցքային արժեքներից է հիմնական շահառուների հետ կառուցողական և արդյունավետ համագործակցությունը, որը նշանակալի դեր ունի Պալատի առաքելության իրականացման գործում: Արտաքին շահառուները կներգրավվեն Պալատի գործունեության մեջ այն ուղղություններով և այն չափով, որքանով դրանք համատեղելի են Պալատի անկախության սկզբունքի հետ:

Յուրաքանչյուր ռազմավարական զարգացման առաջնահերթության շրջանակում սահմանված են հստակ ուղղություններ, որոնց ուղղությամբ իրականացվող միջոցառումները հանդիսանալու են Պալատի զարգացման կարևորագույն գործոնը, ինչպես նաև աջակցելու են հանրային կառավարմանը և բարձրացնելու են հանրային ֆինանսների կառավարման հաշվետվողականությունը:

Հիմնական արտաքին շահառուներ.

- Ազգային ժողով
- Հանրային իշխանության մարմիններ
- ՀՀ քաղաքացիներ
- Քաղաքացիական հասարակություն, լրատվամիջոցներ և մասնագիտական միավորումներ
- Համագործակցող բարձրագույն ուսումնական հաստատություններ և միջազգային աուդիտորական կազմակերպություններ
- ԲՀՄ միջազգային և գործընկեր կազմակերպություններ

Մեր զարգացման առաջնահերթություններն են՝

1. Հաշվեքննության բարձր որակ և նշանակալի ազդեցություն
2. Պալատի բարելավված կառավարում
3. Պրոֆեսիոնալ մարդկային կապիտալ և ինստիտուցիոնալ կարողություններ
4. Բարելավված հաղորդակցություն և ռազմավարական գործընկերություններ:

Հաշվեքննության բարձր որակ և նշանակալի ազդեցություն

Լավագույն արդյունք

Ինչու՞ Մենք նպատակ ունենք բարելավել Պալատի կողմից իրականացվող հաշվեքննությունների արդյունավետությունը, հուսալիությունը և արժեքը՝ համապատասխանեցնելով դրանք ԲՀՄ-ների միջազգային ստանդարտներին (ISSAIs)։

- Տարեկան մոնիթորինգի հաշվետվությունները հաստատում են, որ հաշվեքննությունների հաշվետվություններում ներկայացված արդյունքները հիմնավոր են և առաջարկություններն ունեն նշանակալի ազդեցություն։
- Տեխնոլոգիաները զգալի չափով աջակցում են հաշվեքննությունների արդյունավետ իրականացմանը։
- Որակի տարեկան հաշվետվությունները հաստատում են հաշվեքննության արդյունավետության և Պալատի ընկալման (հեղինակության) չափերի բարելավումը։

Հաջողված մարդակենտրոն հաշվեքննություններ իրականացնելու համար, Պալատը, մի քանի հիմնական միջոցառումների իրականացման միջոցով, կշարունակի բարձրացնել իր աշխատանքի որակը և ազդեցությունը։ Այդ միջոցառումները կվերաբերեն հաշվեքննության գործընթացի բոլոր փուլերին՝ պլանավորում, իրականացում, հաշվետվության ներկայացում և հետհսկողություն։

Կներդրվի որակի կառավարման համակարգ՝ հիմնական ցուցանիշների միջոցով հաշվեքննության կատարողականը հսկելու և բոլոր տեսակի հաշվեքննությունների համար հաշվեքննության հաշվետվությունների որակը գնահատելու համար։ Հետհսկողության հաշվեքննությունները կօգնեն գնահատել հաշվեքննությունների արդյունքների ազդեցությունը։

Հաշվեքննության գործընթացի թվայնացումը և մոնիթորինգը կամրապնդի Պալատի կառավարման կարողությունները։ Նոր ստեղծված որակի հսկողության կոմիտեն առանցքային դեր կխաղա այս զարգացման առաջնահերթության իրականացման գործում։

Անելիք.

Ուղղություններ.

1. Հաշվեքննությունների մեթոդաբանությունների բարելավում՝ համաձայն ISSAI ստանդարտների:

Հաշվեքննության մեթոդաբանությունները կվերանայվեն՝ ISSAI ստանդարտներին մշտապես համահունչ դարձնելու նպատակով՝ ապահովելով միասնականություն և որակական բարձր մակարդակ։

2. Թվայնացում:

Պալատն կկիրառի արհեստական բանականություն, մեքենայական ուսուցում և տվյալների վերլուծություն՝ հաշվեքննության գործընթացների արդյունավետության բարձրացման և թվային հաշվեքննության իրականացման համար։

3. Որակի կառավարման համակարգի բարելավում՝ համաձայն ISSAI 140 ստանդարտին:

Որակի հսկողության համակարգի ներդրումը կնպաստի հաշվեքննությունների համապատասխանությանը միջազգային ստանդարտներին, կբարձրացնի հաշվեքննության արդյունքների վստահելիությունը և կուժեղացնի Պալատի հեղինակությունը և հանրային վստահությունը։

4. Հաշվեքննության առաջարկությունների իրականացման մոնիթորինգի գործընթացների ինստիտուցիոնալացում:

Կստեղծվի համակարգ, որով կիրականացվի առաջարկությունների կատարման մոնիթորինգը և արդյունքների ստուգումը՝ ապահովելով հաշվետվողականություն և ազդեցիկություն։

Պալատի բարելավված կառավարում

Ինչու՞

Մենք նպատակ ունենք բարելավել մեր կազմակերպական գործընթացները՝ համահունչ դարձնելով Պալատի մասին օրենքով սահմանված կառավարման մոդելի պահանջներին: Նոր կառավարման մոդելի ներդրումամբ նախատեսվում է ստեղծել հաշվետվողականության մեխանիզմներ և կիրառել տեղեկատվության օգտագործման անվտանգության ու հետազոծելիության արդիական համակարգ:

Առաջնահերթություն 2-ի հիմնական մարտահրավերը նոր ներքին կառուցվածքի և մարդկային ռեսուրսների լիազորությունների արդյունավետ ձևավորումն է՝ այնպես, որ դրանք նպաստեն հաշվեքննության գործընթացի որակյալ իրականացմանը: Ներքին աուդիտի գործառույթը կբացահայտի կազմակերպական թերությունները: Նորաստեղծ էթիկայի կոմիտեն կապահովի, որ ներքին մշակույթը լիովին համահունչ լինի էթիկայի կանոններին:

Լավագույն արդյունք

- Տարեկան վերանայումները ցույց են տալիս էթիկայի կանոնների խախտումների շարունակական նվազում:
- Մոնիթորինգի և արդյունավետության գնահատման մեխանիզմներն առկա են և գործում են արդյունավետ:

Անելիք.

Ուղղություններ

1. Էթիկայի և Աուդիտի կոմիտեների գործունեության կարգավորումների ներդրում:

Կմշակվեն և կիրառվեն էթիկայի և Աուդիտի կոմիտեների, ինչպես նաև դրանց աջակցող ստորաբաժանումների գործունեության ընթացակարգերը՝ ապահովելով դրանց լիարժեք և արդյունավետ գործունեությունը:

2. Ռազմավարական զարգացման և տարեկան ծրագրերի մոնիթորինգ:

Ծրագրերի համար կկիրառվեն ռիսկերի վրա հիմնված մոտեցումները և կներդրվեն առաջընթացի և արդյունքների մոնիթորինգի համակարգեր:

Պրոֆեսիոնալ մարդկային կապտալ և ինստիտուցիոնալ կարողություններ

Լավագույն արդյունք

Ինչու՞

Մենք նպատակ ունենք ձևավորել պրոֆեսիոնալ, էթիկայի տեսակետից կայուն և կառույցի հավաքական աջակցությունը վայելող հաշվեքննողների կազմ՝ մարդկային ռեսուրսների նպատակային քաղաքականության միջոցով: Մարդկային ռեսուրսների կառավարման մանդատը թույլ կտա ներդնել մարդկային ռեսուրսների ստանդարտներ և ընթացակարգեր, այդ թվում՝ որակավորման չափանիշների, պաշտոնների դասակարգման, վարձատրության համակարգերի և կատարողականի գնահատման մեխանիզմների ձևավորում:

- Պալատին հաջողվում է հավաքագրել և պահպանել բավարար թվով բարձր որակավորում ունեցող աշխատողներ:
- Ամեն տարի Պալատի անձնակազմը կարողանում է թարմացնել իր մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները՝ ներքին մասնագիտական զարգացման համակարգի միջոցով:

Անելիք.

Ուղղություններ

1. Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացում:

Կգործի մարդկային ռեսուրսների ներգրավման, առաջխաղացման, կատարողականի գնահատման և խրախուսման համակարգը՝ հանգեցնելով կոմպետենցիաների կատարելագործմանը:

2. Շարունակական մասնագիտական զարգացման համակարգի ներդրում:

Կներդրվի շարունակական մասնագիտական զարգացման համակարգ՝ աշխատակազմի հմտությունների կատարելագործման համար: Կներդրվի հաշվեքննողների վերապատրաստման կարիքների գնահատման և սկսնակ հաշվեքննողներ ներգրավելու նպատակով անհրաժեշտ վերապատրաստման/ուսուցման ծրագրերի կազմակերպման համակարգ:

3. Կազմակերպական մշակույթի ամրապնդում:

Պալատի կազմակերպական մշակույթը հիմնված է իր արժեքների և սկզբունքների վրա: Կներդրվեն կազմակերպական մշակույթի անընդհատ զարգացման խթաններ, որը կարտահայտվի INTOSAIN'T ինքնագնահատման գործիքի կիրառության արդյունքում գնահատականի շարունակական բարելավմամբ (բարձր դիրքում պահպանմամբ):

Բարելավված հաղորդակցություն և ռազմավարական գործընկերություններ

Լավագույն արդյունք

Ինչու՞

Մենք նպատակ ունենք ձևավորել թափանցիկ և հասանելի կառույց՝ հաղորդակցության կատարելագործման միջոցով: Հաղորդակցության և համագործակցության ամրապնդումը կնպաստի շահառուների հետ հարաբերությունների կայունացմանն ու բարելավմանը: Պալատի հանրային ընկալումն այդպիսով կդառնա համարժեք թե՛ ազգային, թե՛ միջազգային հարթակներում և կամրապնդվի կառույցի համագործակցությունը Ազգային ժողովի և Կառավարության հետ՝ հաշվեքննության պլանավորման և արդյունքների ներկայացման գործընթացներում:

- Տարեկան հարցումները և գնահատումները ցույց են տալիս Պալատի հանրային ընկալման և համագործակցության աճ ինչպես ներքին, ազգային, այնպես էլ միջազգային հարթակներում, ինչպես նաև նրա հաշվետվությունների որակի և հաղորդակցության թափանցիկության գնահատականի բարձրացում:
- Հաշվեքննիչ պալատի աշխատակիցները բարձր են գնահատում ներքին հաղորդակցության բաց և արդյունավետ բնույթը:

Անելիք.

Ուղղություններ

1. Թափանցիկության բարձրացում:

Պալատը ձգտելու է մշտապես արժանանալ հանրային բարձր վստահության: Այդ նպատակով, Պալատը կապահովի հաշվեքննությունների հաշվետվությունների բարձր ստանդարտներին համապատասխանող որակ՝ անդընդհատ բարելավելով մեղիա հաղորդակցությունը և զարգացնելով հաշվեքննությունների արդյունքներն առավելագույն հանրամատչելի կերպով (user-friendly) հանրային լայն շրջանակին ներկայացնելու կարողությունը:

2. Հաղորդակցություն և շահառուների ներգրավվածության կազմակերպում:

Պալատը կզարգացնի հաղորդակցությունը Ազգային ժողովի, Կառավարության, հանրության և այլ շահառուների հետ: Կկազմակերպվեն հանրային իրազեկման արշավներ՝ հաշվեքննության նշանակության վերաբերյալ: Հաղորդակցության և ներգրավման համար պալատը կիրառում է մեղիա և սոցիալական հարթակներ:

3. Միջազգային համագործակցության ընդլայնում:

Պալատը կխթանի ավելի սերտ համագործակցությունը INTOSAI/EUROSAI/ASOSAI շրջանակներում և մասնակցություն կունենա գործընկերային վերանայումների և համալսող հաշվեքննությունների գործընթացներում:

4. Ներքին հաղորդակցության բարելավում:

Պալատի արժեքների և կազմակերպական մշակույթի հիման վրա կներդրվի ներքին հաղորդակցության համակարգ: Կգործարկվի Ինտրանետ հարթակ, որը կծառայի ներքին հաղորդակցության, տեղեկատվական շտեմարանների ձևավորման, տվյալներին հասանելիության, փաստաթղթերի փոխանակման և աշխատանքային գործընթացների կառավարումը կազմակերպելուն:

- ✓ **Մարդկային կարողությունների ռիսկ** – Ռազմավարական նախաձեռնությունների իրականացումը էապես կախված է մարդկային ռեսուրսներից: Օրենքով անցումային փուլում գտնվելու հանգամանքով պայմանավորված, Պալատում զգալի թվով թափուր պաշտոնների առկայությունը, կարող է զսպող ազդեցություն ունենալ կառույցի զարգացման ճանապարհին:
- ✓ **Գործառնական արդյունավետության ռիսկ** – Պալատի գործունեության արտադրողականության համար նշանակալի գործոն է աշխատանքը միասնական ֆիզիկական և էլեկտրոնային միջավայրում կազմակերպելու հանգամանքը: Մինչդեռ, Կառույցը գործում է երկու տարբեր մասնաշենքերում, ինչը սահմանափակում է ներքին հաղորդակցության բարելավման հնարավորությունը և բարդացնում է միասնական էլեկտրոնային միջավայրի ու անվտանգ SS ենթակառուցվածքի ներդրումը՝ գեներացնելով ներքին հաղորդակցության ներուժի օգտագործման և թվային համակարգերի կայունության ռիսկեր:
- ✓ **Հաշվեքննությունների որակի ռիսկ** – Որակի հսկողության համակարգի ներդրումը և հաշվեքննությունների մեթոդաբանությունները մշտապես արդիականացնելու աշխատանքների վրա վերոնկարագրյալ երկու ռիսկերի տեղի ունենալու ազդեցությունը կարող է հանգեցնել միջոցառումների թերիրացումների՝ զսպելով հաշվեքննությունների որակի բարձրացումը:

VI. Հաջողության առանցքային գործոններ

Ռազմավարական առաջնահերթությունները կանոնավոր մոնիթորինգի են ենթարկվելու

Մոնիթորինգ և գնահատում

2026–2032թթ. ռազմավարական զարգացման ծրագրի իրականացումը կենթարկվի մոնիթորինգի և անհրաժեշտության դեպքում՝ կվերանայվի: Պալատը ռազմավարության կատարողականը կգնահատի սահմանված ցուցանիշների հիման վրա:

Պալատը հսկելու է մոնիթորինգը, գնահատելու է առկա առաջընթացը, որի արդյունքում յուրաքանչյուր տարի կարող է վերանայվել Միջոցառումների պլանը: Յուրաքանչյուր երեք տարին մեկ ռազմավարական առաջնահերթությունները, ուղղություններն ու միջոցառումները կգնահատվեն՝ հաշվի առնելով ներքին և արտաքին զարգացումները, այդ թվում՝ **SAI-PMF** գնահատումների արդյունքները: Պալատը, տարեկան և եռամյա գնահատումների հիման վրա, որոշումներ կկայացնի հետագա ռազմավարական նպատակադրումների և ուղղությունների վերաբերյալ ու դրանք կհաղորդակցի ներքին և արտաքին շահառուներին՝ ներառյալ միջազգային գործընկերներին:

2026–2032թթ. Ռազմավարական զարգացման ծրագիրը մշակվել է հիմնվելով նախորդ ռազմավարական ծրագրերի, հաշվեքննության միջնաժամկետ առաջնահերթությունների և ընթացիկ միջավայրի վերլուծության վրա, առաջնորդվելով INTOSAI IDI ուղեցույցներով և ներքին ընթացակարգերով:

Ծրագրի մշակմանը մասնակցել են OECD/SIGMA փորձագետները և միջազգային գործընկերները:

Սույն Ռազմավարական զարգացման ծրագրի վերանայումը նախատեսվում է իրականացնել 2028 թվականին՝ Հաշվեքննիչ պալատի կադրաբանության PMF մեթոդաբանությամբ գնահատումներից հետո:

2026–2032թթ. Ռազմավարական զարգացման ծրագիրը հաստատվել է Հաշվեքննիչ պալատի կողմից 2025 թվականի նոյեմբերի 27-ին:

ՀԱՇՎԵՔՆՆՉԻ ՊԱԼԱՏԻ 2026–2032 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱԲՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Հ/Հ	Ուղղություններ և միջոցառումներ	Պատասխանատու ստորաբաժանում	Իրականացման ժամկետ	Ֆինանսավորում	Արդյունքի և մոնիթորինգի ցուցանիշներ
Առաջնահերթություն 1. Հաշվեքննության բարձր որակ և նշանակալի ազդեցություն					
Ուղղություն 1. Հաշվեքննությունների մեթոդաբանությունների բարելավում՝ համաձայն ISSAI ստանդարտներին					
1.1	Ֆինանսական հաշվեքննության մեթոդաբանության վերանայում և կիրարկում՝ համաձայն ISSAI ստանդարտների	ՄՏՏ վարչություն, ՖՀՀ վարչություն	2028, IV եռամս. 2029, IV եռամս. 2030, IV եռամս. 2031, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ, Շվեդիայի ԲՀՄ	- Ֆինանսական հաշվեքննության բարելավված մեթոդաբանությունը հաստատվել է: - Նոր մեթոդաբանությունը փորձարկվել է գործնականում: - Նոր մեթոդաբանությունը վերանայվել է ըստ անհրաժեշտության և լիարժեքորեն գործում է: - Պալատի որակի կառավարման համակարգի մոնիթորինգի արդյունքները հաստատում են ֆինանսական հաշվեքննությունների համապատասխանությունը ISSAI ստանդարտներին:
1.2	Վերանայված ֆինանսական հաշվեքննության մեթոդաբանության հիման վրա վերապատրաստման ծրագրի մշակում և իրականացում	ՄՏՏ վարչություն, ՖՀՀ վարչություն	2030, II եռամս. 2031, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ, Շվեդիայի ԲՀՄ	- Հաշվեքննողների առնվազն 95%-ը վերապատրաստվել է նոր ֆինանսական հաշվեքննության մեթոդաբանության կիրառման համար: - Նոր ֆինանսական հաշվեքննության մեթոդաբանությունը հաջողությամբ կիրառվել է պետական բյուջեի կատարման հաշվեքննության ընթացքում:

Հ/Հ	Ուղղություններ և միջոցառումներ	Պատասխանատու ստորաբաժանում	Իրականացման ժամկետ	Ֆինանսավորում	Արդյունքի և մոնիթորինգի ցուցանիշներ
1.3	Համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանության վերանայում և կիրարկում՝ համաձայն ISSAI ստանդարտների	ՄՏՏ վարչություն, ՖՀՀ վարչություն	2028, IV եռամս. 2029, IV եռամս. 2030, IV եռամս. 2031, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Համապատասխանության հաշվեքննության բարելավված մեթոդաբանությունը հաստատվել է: - Նոր մեթոդաբանությունը փորձարկվել է գործնականում: - Նոր մեթոդաբանությունը վերանայվել է ըստ անհրաժեշտության և լիարժեքորեն գործում է: - Պալատի որակի կառավարման համակարգի մոնիթորինգի արդյունքները հաստատում են համապատասխանության հաշվեքննությունների համապատասխանությունը ISSAI ստանդարտներին:
1.4	Վերանայված համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանության հիման վրա վերապատրաստման ծրագրի մշակում և իրականացում	ՄՏՏ վարչություն, ՖՀՀ վարչություն	2030, IV եռամս. 2031, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Հաշվեքննողների առնվազն 95%-ը վերապատրաստվել է մեթոդաբանության կիրառման համար: - Համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունը հաջողությամբ կիրառվել է երկու հաշվեքննության ընթացքում:
1.5	Կատարողականի հաշվեքննության մեթոդաբանության վերանայում և կիրարկում՝ համաձայն ISSAI ստանդարտների	ՄՏՏ վարչություն, ԿՀ վարչություն	2028, IV եռամս. 2029, IV եռամս. 2030, IV եռամս. 2031, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ, Շվեդիայի ԲՀՄ	- Կատարողականի հաշվեքննության բարելավված մեթոդաբանությունը հաստատվել է: - Նոր մեթոդաբանությունը փորձարկվել է գործնականում: - Նոր մեթոդաբանությունը վերանայվել է ըստ անհրաժեշտության և լիարժեքորեն գործում է: - Պալատի որակի կառավարման համակարգի մոնիթորինգի արդյունքները հաստատում են կատարողականի հաշվեքննությունների համապատասխանությունը ISSAI ստանդարտներին:
1.6	Վերանայված կատարողականի հաշվեքննության մեթոդաբանության հիման վրա վերապատրաստման ծրագրի մշակում և իրականացում	ՄՏՏ վարչություն, ԿՀ վարչություն	2030, IV եռամս. 2031, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ, Շվեդիայի ԲՀՄ	- Հաշվեքննողների առնվազն 95%-ը վերապատրաստվել է նոր մեթոդաբանության կիրառման համար: - Նոր կատարողականի հաշվեքննության մեթոդաբանությունը հաջողությամբ կիրառվել է երկու հաշվեքննության ընթացքում:

Հ/Հ	Ուղղություններ և միջոցառումներ	Պատասխանատու ստորաբաժանում	Իրականացման ժամկետ	Ֆինանսավորում	Արդյունքի և մոնիթորինգի ցուցանիշներ
Ուղղություն 2. Թվայնացում					
2.1	Պալատի գործունեության թվայնացում	ՄՏՏ վարչություն ՖՀՀ վարչություն ԿՀ վարչություն	2027, I եռամս. 2029, I եռամս. 2029-2032	ՀՊ և արտաքին միջոցներ	- Թվայնացման միջոցառումների ծրագիրը հաստատվել է: - Թվայնացման միջոցառումներն իրականացվել են: - Թվային համակարգը փորձարկվել է և գործում է ՀՀ-ում գործող, միջազգային ստանդարտներին համապատասխան:
2.2	Տեղեկատվության հետ աշխատելու կարգավորումների ներդրում (ներառյալ՝ տեղեկատվության անվտանգությունը)	ՄՏՏ վարչություն, ԱԷՈԱ բաժին, Իրավաբանական բաժին	2027, I եռամս. 2028, I եռամս. 2029 IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- ՀՀ-ում գործող, միջազգային ստանդարտներին համապատասխան կարգավորումները հաստատված են: - Կարգավորումները գործում են: - Արտաքին հավաստիացումը՝ համապատասխանության վերաբերյալ ստացված է:
Ուղղություն 3. Որակի կառավարման համակարգի բարելավում՝ համապատասխան ISSAI 140 ստանդարտին					
3.1	Պալատի որակի կառավարման քաղաքականության համապատասխանեցում ISSAI 140 ստանդարտին	ԱԷՈԱ բաժին, Իրավաբանական բաժին	2026, IV եռամս. 2027, I եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ, Շվեդիայի ԲՀՄ	- Պալատի որակի կառավարման համակարգի ստանդարտացված շրջանակի սահմանում, որը ընդգրկում է պլանավորումը, իրականացումը, հաշվետվության ներկայացումը և հետհսկողությունը: - Պալատի որակի կառավարման համակարգը համապատասխանում է ISSAI 140 ստանդարտին:
3.2	Աուդիտի, էթիկայի և Որակի հսկողության կոմիտեների գործունեության աջակցության ապահովում	ԱԷՈԱ բաժին Իրավաբանական բաժին	2026, IV եռամս. 2027, IV եռամս. 2028, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ, Շվեդիայի ԲՀՄ	- Աշխատակարգը հաստատված է: - Աշխատակարգը փորձարկվել է: - Որակի գնահատման արդյունքներով համակարգը գործում է:
Ուղղություն 4. Հաշվեքննության առաջարկությունների իրականացման մոնիթորինգի գործընթացների ինստիտուցիոնալացում					
4.1	Հաշվեքննության առաջարկությունների մոնիթորինգի համակարգի զարգացում	ԱԷՈԱ բաժին ՄՏՏ վարչություն ՖՀՀ վարչություն ԿՀ վարչություն	2026, IV եռամս. 2027, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ, Շվեդիայի ԲՀՄ Լատվիայի ԲՀՄ	- Մոնիթորինգի համակարգի կիրարկման արդյունքները հրապարակվում են: - Թիրախային խմբերին հասանելի են հաշվեքննությունների առաջարկությունների մոնիթորինգի գնահատականները:

Հ/Հ	Ուղղություններ և միջոցառումներ	Պատասխանատու ստորաբաժանում	Իրականացման ժամկետ	Ֆինանսավորում	Արդյունքի և մոնիթորինգի ցուցանիշներ
4.2	Հետհսկողության հաշվեքննության մեթոդաբանության ներդրում	ՄՏՏ վարչություն, ՖՀՀ և ԿՀ վարչություն	2027, I եռամս. 2027, II-III եռամս. 2028, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ, Շվեդիայի ԲՀՄ Լատվիայի ԲՀՄ	- Հետհսկողության հաշվեքննության մեթոդաբանությունը հաստատվել է: - Նոր մեթոդաբանությունը փորձարկվել է գործնականում: - Նոր մեթոդաբանությունը վերանայվել է ըստ անհրաժեշտության և լիարժեքորեն գործում է:
4.3	Մարդկանց կյանքում հաշվեքննության ազդեցության գնահատում	ՄՏՏ վարչություն, ՖՀՀ և ԿՀ վարչություն	2027, IV եռամս. 2029, I եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ, Շվեդիայի ԲՀՄ Լատվիայի ԲՀՄ	- Մեթոդաբանությունը հաստատվել է: - Առաջին գնահատման արդյունքները հրապարակվել են:

Առաջնահերթություն 2: Պալատի բարելավված կառավարում

Ուղղություն 1. Էթիկայի և Աուդիտի կոմիտեների գործունեության կարգավորումների ներդրում

1.1	Պալատի ծառայողների էթիկայի կանոնների վերանայում	ԱԷՈԱ բաժին, Իրավաբանական բաժին	2026, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	Էթիկայի կանոնները համապատասխանում են ISSAI ստանդարտին:
1.2	Էթիկայի կոմիտեին աջակցող ստորաբաժանման գործառույթների սահմանում	ԱԷՈԱ բաժին, Իրավաբանական բաժին	2026, IV եռամս. 2027, I եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Գործառույթները հաստատված են: - Գործառույթները կիրառվում են:
1.3	Էթիկայի կանոնների պահպանման մոնիթորինգի մեխանիզմի զարգացում	ԱԷՈԱ բաժին, Իրավաբանական բաժին, ԱԿՄ բաժին	2026, IV եռամս. 2027, I եռամս. 2027, IV եռամս. 2028, I եռամս. 2028, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Մոնիթորինգի մեխանիզմը հաստատված է: - Մոնիթորինգի մեխանիզմը փորձարկվել է: - Մոնիթորինգի և գնահատման մեխանիզմները գործում են: - Էթիկայի մշակույթի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը ներկայացված է: - Էթիկայի կանոններին անհամապատասխանության տարեկան ցուցանիշը նվազել է 25%-ով (հիմք ընդունելով 2027թ.):
1.4	Էթիկայի կանոնների պահպանման կատարողականի գնահատում	ԱԷՈԱ բաժին, Իրավաբանական բաժին, ԱԿՄ բաժին	2026, II եռամս. 2026, III-IV եռամս. 2027, I եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Գնահատման չափորոշիչները հաստատված են: - Գնահատման չափորոշիչները փորձարկվել են: - Գնահատման չափորոշիչները գործում են:

Հ/Հ	Ուղղություններ և միջոցառումներ	Պատասխանատու ստորաբաժանում	Իրականացման ժամկետ	Ֆինանսավորում	Արդյունքի և մոնիթորինգի ցուցանիշներ
1.5	Էթիկայի կանոնների խախտումների հայտնաբերման համակարգի զարգացում	ԱԷՈԱ բաժին, Իրավաբանական բաժին	2026, IV եռամս. 2027, I եռամս. 2027, II եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Էթիկական կանոնների խախտումների հայտնաբերման համակարգը հաստատված է: - Էթիկական կանոնների խախտումների հայտնաբերման համակարգը փորձարկվել է: - Էթիկական կանոնների խախտումների հայտնաբերման համակարգը գործում է:
1.6	Աուդիտի կոմիտեին աջակցող ստորաբաժանման գործառնությունների սահմանում	ԱԷՈԱ բաժին, ՆԱ բաժին, ԱԿՄ բաժին	2026, IV եռամս. 2027, I եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Գործառնությունները հաստատված են: - Գործառնությունները կիրառվում են:
1.7	Աուդիտի կոմիտեի և ներքին աուդիտի աշխատակարգի մշակում	ԱԷՈԱ բաժին, ՆԱ բաժին, Իրավաբանական բաժին	2027, I եռամս. 2027, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Աշխատակարգը հաստատված է: - Աշխատակարգը փորձարկվել է և գործում է:
1.8	Ներքին աուդիտի մեթոդաբանության ներդրում	ԱԷՈԱ բաժին, ՆԱ բաժին,	2027, I եռամս. 2027, II եռամս. 2027, III եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Ներքին աուդիտի մեթոդաբանությունը հաստատվել է: - Նոր մեթոդաբանությունը փորձարկվել է գործնականում: - Նոր մեթոդաբանությունը վերանայվել է ըստ անհրաժեշտության և լիարժեքորեն գործում է:
Ուղղություն 2. Ռազմավարական զարգացման և տարեկան ծրագրերի մոնիթորինգ					
2.1	Տարեկան գործունեության ծրագրի իրականացման մոնիթորինգի համակարգի զարգացում	ՄՏՏ վարչություն, ԱԷՈԱ բաժին, Ներքին աուդիտի բաժին	2026, IV եռամս. 2027, I եռամս. 2027, III եռամս. (Տարեկան) 2027, IV եռամս. (Տարեկան)	ՀՊ և արտաքին միջոցներ, Շվեդիայի ԲՀՄ	- Մոնիթորինգի ընթացակարգերը հաստատվել են: - Մոնիթորինգը փորձարկվել է: - Մոնիթորինգն իրականացվել է: - Տարեկան գործունեության ծրագրի հաստատումից առաջ իրականացված մոնիթորինգի արդյունքների գնահատումը համարվել է բավարար:

Հ/Հ	Ուղղություններ և միջոցառումներ	Պատասխանատու ստորաբաժանում	Իրականացման ժամկետ	Ֆինանսավորում	Արդյունքի և մոնիթորինգի ցուցանիշներ
2.2	Ռազմավարական զարգացման ծրագրի և դրա իրականացման միջոցառումների պլանի իրականացման մոնիթորինգի համակարգի զարգացում	ՄՏՏ վարչություն, ԱԷՈԱ բաժին	2026, IV եռամս. 2027, I եռամս. 2027, II եռամս. 2027, IV եռամս. (Տարեկան) 2028, III եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Մոնիթորինգի ընթացակարգերը հաստատվել են: - Մոնիթորինգը փորձարկվել է: - Մոնիթորինգն իրականացվել է: - Մոնիթորինգի և SAI PMF-ի արդյունքների գնահատումը համարվել է բավարար: - Մոնիթորինգը կիրառվել է ռազմավարական միջոցառումների պլանի թարմացման համար:

Առաջնահերթություն 3. Պրոֆեսիոնալ մարդկային կապիտալ և ինստիտուցիոնալ կարողություններ

Ուղղություն 1. Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի զարգացում

1.1	Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի բարելավում՝ ներառյալ առաջխաղացման և կատարողականի գնահատման համակարգի ներդրումը	ԱԿՄ բաժին	2026, IV եռամս. 2027, I եռամս. 2028, I եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Կարգավորումները հաստատված են: - Համակարգը փորձարկվել է գործնականում: - Համակարգը վերանայվել է ըստ անհրաժեշտության և լիարժեքորեն գործում է:
1.2	Մարդկային ռեսուրսների թվային տեղեկատվական համակարգի (HRIS) ներդրում	ԱԿՄ բաժին, ՄՏՏ վարչություն, Իրավաբանական բաժին, Ֆին. բաժին	2027, IV եռամս. (գնումներ) 2028, III եռամս. (իրականացում) 2029, I եռամս. (գործարկում)	ՀՊ և արտաքին միջոցներ	- HRIS համակարգը ներդրված է: - HRIS համակարգը հաջողությամբ փորձարկվել է: - HRIS համակարգը գործում է:

Ուղղություն 2. Շարունակական մասնագիտական զարգացման համակարգի ներդրում

2.1	Հաշվեքննիչ պալատի աշխատողների շարունակական մասնագիտական զարգացման կարիքի բացահայտում	ԱԿՄ բաժին	2026, III եռամս. 2026, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Կատարողականի (կոմպետենցիաների) գնահատումն իրականացվել է: - Աշխատողների մասնագիտական զարգացման կարիքները հստակեցվել են:
2.2	Շարունակական մասնագիտական զարգացման ծրագրի ներդրում	ԱԿՄ բաժին	2027-ից սկսած	ՀՊ և արտաքին միջոցներ	Տարեկան ծրագիրը հաստատվել է:

Հ/Հ	Ուղղություններ և միջոցառումներ	Պատասխանատու ստորաբաժանում	Իրականացման ժամկետ	Ֆինանսավորում	Արդյունքի և մոնիթորինգի ցուցանիշներ
2.3	Մենթորային ծրագրի ներդրում	ԱԿՄ բաժին	2026, III եռամս. 2026, IV եռամս. 2027, I եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ, Շվեդիայի ԲՀՄ	- Մենթորային ծրագիրը մշակված է: - Մենթորային ծրագիրը քննարկվել է: - Մենթորային ծրագիրը հաստատված է և կիրառվում է:
Ուղղություն 3. Կազմակերպական մշակույթի ամրապնդում					
3.1	Կազմակերպական (կորպորատիվ) մշակույթի խթանում	ԱԿՄ բաժին, ՄՏՏ վարչություն	2027, I եռամս. 2027- 2032	ՀՊ և արտաքին միջոցներ	- Մեթոդաբանությունը հաստատված է: - Մեթոդաբանությունը կիրառվում է և արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է Պալատին:
3.2	Էթիկայի կանոնների պահպանման ամրապնդում	ԱԿՄ բաժին, ԱԷՈԱ բաժին	Տարեկան, սկսած 2027, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Պալատի աշխատողների Էթիկայի կանոնների վերապատրաստման ծրագրերը հաստատվել են: - Էթիկայի կանոնների վերապատրաստումներն իրականացվել են: - Մշտադիտարկման արդյունքները հաստատում են Էթիկայի կանոնների գործնականում կիրառման մասին:
3.3	Յուրաքանչյուր երկու տարին մեկ INTOSAINТ մեթոդաբանության կիրառում՝ որպես ինքնագնահատման գործիք	ԱԿՄ բաժին, ՄՏՏ վարչություն	2029, II եռամս. 2029, III եռամս. 2030, 2032	Արտաքին միջոցներ	- INTOSAINТ մեթոդաբանությամբ աշխատողների ուսուցումն ավարտված է: - Փորձնական ինքնագնահատումը կատարված է: - Ինքնագնահատումն իրականացվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ:
Առաջնահերթություն 4. Բարելավված հաղորդակցություն և ռազմավարական գործընկերություններ					
Ուղղություն 1. Թափանցիկության բարձրացում					
1.1	Հրապարակման ենթակա տեղեկատվության հանրային մատչելիության ապահովում	ՄՏՏ վարչություն, Հաղ. և արարող. բաժին	2026, III եռամս. 2027, IV եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Պալատի հրապարակման ենթակա բոլոր փաստաթղթերը հանրայնացված են, բաց են և մատչելի: - Թիրախային խմբերի հարցման արդյունքներով՝ հրապարակված տեղեկատվության մատչելիության վերաբերյալ գնահատականը դրական է:

Հ/Հ	Ուղղություններ և միջոցառումներ	Պատասխանատու ստորաբաժանում	Իրականացման ժամկետ	Ֆինանսավորում	Արդյունքի և մոնիթորինգի ցուցանիշներ
1.2	Հաշվեքննության հաշվետվությունների ներկայացման ձևաչափի վերանայում՝ հաշվեքննության արդյունքների ներկայացումը պարզեցնելու նպատակով	ՄՏՏ վարչություն, Հաղ. և արարող. բաժին	2026, IV եռամս. 2027 2028, I եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Թիրախային խմբի համար հաշվեքննության հաշվետվությունների վերաբերյալ հարցումներն իրականացված են: - Հաշվեքննության հաշվետվությունների ներկայացման ձևաչափը վերանայվել է, ներառյալ՝ վիզուալիզացիայի գործիքների կիրառումը: - Հաշվեքննության հաշվետվությունները հրապարակվում են վերանայված ձևաչափին համապատասխան: - Թիրախային խմբերի հարցման արդյունքներով՝ հաշվեքննության հաշվետվությունների նոր կառուցվածքի գնահատականը աճել է 10%-ով:
1.3	Հաշվեքննության հաշվետվության արտաքին հաղորդակցության ընդլայնում	ՄՏՏ վարչություն, Հաղ. և արարող. բաժին	2026, IV եռամս. 2027 2028, I եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Լրատվամիջոցների հետ պարբերական հանդիպումները կազմակերպվում են: - Մամուլի հաղորդագրություններ հրապարակվում են: - Հաշվեքննության ամփոփ հաշվետվությունները հրապարակվում են: - Սոցիալական հարցման արդյունքներով՝ հաշվեքննության հաշվետվությունների վերաբերյալ հաղորդակցության նոր ձևաչափերը ստացել են 75% դրական գնահատական:
Ուղղություն 2. Հաղորդակցություն և շահառուների ներգրավվածության կազմակերպում					
2.1	Ազգային ժողովի հետ հաղորդակցության շրջանակի սահմանում	ՄՏՏ վարչություն, Հաղ. և արարող. բաժին	2027, I եռամս. 2027, II եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Ազգային ժողովի հետ հաղորդակցության շրջանակը համաձայնեցված է: - Համաձայնեցված հաղորդակցությունն իրականացվում է:
2.2	Աժ պատգամավորների և աշխատակազմի իրազեկում Պալատի գործունեության մասին	Հաղ. Մասնագետ, ԱԿՄ բաժին, Հաղ. և արարող. բաժին	2026-2032	ՀՊ և արտաքին միջոցներ	- Առնվազն երկու աշխատաժողով Աժ պատգամավորների մասնակցությամբ իրականացվել է: - Առնվազն երկու աշխատաժողով Աժ աշխատակազմի, փորձագետների մասնակցությամբ իրականացվել է:

Հ/Հ	Ուղղություններ և միջոցառումներ	Պատասխանատու ստորաբաժանում	Իրականացման ժամկետ	Ֆինանսավորում	Արդյունքի և մոնիթորինգի ցուցանիշներ
2.3	Մասնագիտական համագործակցության ամրապնդում հանրային իշխանության մարմինների հետ	ՄՏՏ վարչություն, Հաղ. և արարող. բաժին	2027, II եռամս. 2028, II եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Առնվազն երկու աշխատաժողով կազմակերպվել է: - Աշխատաժողովը գնահատվել է արդյունավետ:
2.4	Հանրային իրազեկման արշավների կազմակերպում՝ հաշվեքննության նշանակության վերաբերյալ (լրատվամիջոցներ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, համալսարաններ)	ՄՏՏ վարչություն, Հաղ. և արարող. բաժին, Հաղ. մասնագետ	2027, III եռամս. 2028, III եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ, Շվեդիայի ԲՀՄ	- ՀՀ ամբողջ տարածքում ծածկույթը կազմում է 75%: - Իրազեկման արշավների մասնակիցների 90%-ը համարժեքորեն ընկալում է Պալատի դերը: - Իրազեկման արշավների մասնակիցների 75%-ը բավարարված է Պալատի գործունեության արդյունքից:
2.5	Պալատի՝ հանրային ճանաչողությունը գնահատելու համակարգի ստեղծում	ՄՏՏ վարչություն, Հաղ. և արարող. բաժին	2027, I եռամս. 2027, I եռամս. սկսած 2028, I եռամս. 2028-2032	ՀՊ և արտաքին միջոցներ	- Հարցումների նախագծերը հաստատվել են: - Հարցումը փորձարկվել է թիրախային խմբի համար: - Փոփոխված հարցումը անցկացվում է ամեն տարի: 2028 թվականից սկսած՝ Պալատի դերը համարժեքորեն ընկալող բնակչության թիվն աճել է 10%-ով՝ 2027 թվականի համեմատությամբ:
Ուղղություն 3. Միջազգային համագործակցության ընդլայնում					
3.1	Մասնակցություն INTOSAI, EUROSAI և ASOSAI միջոցառումներին և աշխատանքային խմբերին	ՄՏՏ վարչություն, Հաղ. և արարող. բաժին	2026-2032	ՀՊ միջոցներ	- Պալատը տարեկան մասնակցում է առնվազն 4 միջոցառման: - Պալատը մասնակցում է առնվազն երեք աշխատանքային խմբերի գործունեությանը:
3.2	Փորձագիտական գնահատումների և համագործակցային հաշվեքննությունների իրականացում	ՄՏՏ վարչություն, Հաղ. և արարող. բաժին	2027- 2032	ՀՊ և արտաքին միջոցներ	- Մեկ անգամ իրականացվել է կատարողականի չափման SAI-PMF գնահատում: - Մեկ անգամ իրականացվել է Պալատի գործունեության գործընկերային գնահատում (այլ ԲՀՄ-ի կողմից՝ ցանկության դեպքում): - Պալատը յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ մասնակցում է մեկ համագործակցային հաշվեքննության:

Հ/Հ	Ուղղություններ և միջոցառումներ	Պատասխանատու ստորաբաժանում	Իրականացման ժամկետ	Ֆինանսավորում	Արդյունքի և մոնիթորինգի ցուցանիշներ
3.3	Միջազգային միջոցառումների կազմակերպում	ՄՏՏ վարչություն, Հաղ. և արարող. բաժին	2026, IV եռամս. 2028, II եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Միջազգային միջոցառման ծրագիրը հաստատվել է Պալատի կողմից: - Միջոցառմանը մասնակցող ԲՀՄ-ների 90%-ը բարձր է գնահատել միջոցառման կազմակերպումն ու բովանդակությունը:
3.4	Աջակցություն համանման (համարժեք) ԲՀՄ-ներին	ՄՏՏ վարչություն, Հաղ. և արարող. բաժին	2027, I եռամս. 2028, I եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Առնվազն մեկ օժանդակման ծրագիր հաստատված է: - Առնվազն մեկ օժանդակման ծրագիր իրականացվել է:

Ուղղություն 4. Ներքին հաղորդակցության բարելավում

4.1	Ներքին հաղորդակցության հարթակի (Ինտրանետ) ներդրում	ՄՏՏ վարչություն, Հաղ. և արարող. բաժին	2027, IV եռամս. 2028, III եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ	- Ծրագրային ապահովումը հաջողությամբ փորձարկված և ներդրված է: - Ինտրանետը գործում է:
4.2	Պալատում ներքին հաղորդակցության բարելավում	ՄՏՏ վարչություն, Հաղ. և արարող. բաժին, ՖՀՀ և ԿՀ վարչություններ	2026, IV եռամս. 2027, II եռամս. 2027, I եռամս.	ՀՊ և արտաքին միջոցներ, Շվեդիայի ԲՀՄ	- Ներքին հաղորդակցության կարգավորումները սահմանված են: - Ներքին հանդիպումները անցկացվում են սահմանված կարգավորումներին համապատասխան: - Տեղական և միջազգային միջոցառումներին ու աշխատանքային խմբերին մասնակից աշխատողները արդյունքները ներկայացնում են: